

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ - 180

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԸ (1895-1896 թթ.)

Մկրտիչ Խրիմյանի կաթողիկոսական շրջանը համընկավ հայ ժողովրդի ողբերգական ու հերոսական մի ժամանակաշրջանի հետ, որի ընթացքում թուրքական բռնապետությունը հարձակումներ սկսեց հայ ազատագրական շարժումների վրա: Եվրոպական դիվանագիտության մեջ քանիցս արծարծվեց հայկական հարցը առանց որևէ դրական արդյունքների: Երկրում և երկրից դուրս կյանքի հրամայականով ստեղծված ազգային երեք կուսակցությունները՝ արմենականները, հնչակյանները և դաշնակցականները, իրենց առջև նպատակ էին դրել արևմտահայ ժողովրդի պաշտպանությունը թուրքական բռնապետությունից: Նրանք հակված էին մեծ տերությունների միջամտությամբ ստիպել Բ. Դռանը բարեռորոգումներ կատարել Արևմտյան Հայաստանում Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի համապատասխան: Դարավերջի տասնամյակը նշանավորվում է մի կողմից սուլթանական կառավարության հայահալած քաղաքականության սաստկացմամբ և մյուս կողմից, իբրև դրա հետևանք՝ արևմտահայ ազգային-ազատագրական շարժման վերելքով:

Խրիմյանն իր կաթողիկոսության ողջ ընթացքում ծավալում է բազմաբնույթ գործունեություն արևմտահայությանը հուզող կարևոր խնդիրներ լուծելու նպատակով: Դեռևս Խրիմյանի պատրիարքության օրոք թուրք ազատամիտ Քամիլ փաշան նրա հետ զրուցելիս իր կառավարության՝ հայերի նկատմամբ վարած քաղաքակա-

նությունը համեմատում է Ամերիկայի վայրենի բնիկների հետ, որոնք, ընկուզենու պտուղները քաղելու համար, կտրում են ընկուզենին արմատից[1]:

Հայաթափ էր լինում Արևմտյան Հայաստանը: Այնտեղ մոլեգնող սովը, սուլթանի կողմից ստեղծված համիդիե քրդական գնդերի ասպատակությունները, արևմտահայերի հողազրկման գործընթացի սաստկացումը ստիպում էր նրանց թողնել տուն, տեղ, հայրենիք և բռնել գաղթի ճանապարհը: Այդ երևույթը խիստ անհանգստացնում էր արևելահայ և արևմտահայ հասարակական գործիչներին, գաղթօջախների ականավոր դեմքերին: Բոլորի հայացքներն ուղղվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի վրա[2]:

Այդ ժամանակ Արևմտյան Հայաստանում բռնկվում է Սասունի ապստամբությունը (1894 թ. օգոստոսի 12-ից սեպտեմբերի 4-ը), որի լուրը կաթողիկոսին է հասնում ուշացումով՝ տարեվերջին: Ապստամբության մասնակիցների մեջ Խրիմյանի նախին սաներն էին, նրա գաղափարակիցները, հայրենասեր մի քանի հոգևորականներ, որոնք շնչել ու հասունացել էին Վասպուրականի Արծվի գաղափարական մթնոլորտում: Դրանցից ակնառուները Տարոնի հոգևոր առաջնորդ Ներսես Խարախանյանը և Ս. Կարապետ վանքի վանահայր Վարդան վարդապետ Հակոբյանն էին:

Խրիմյանին ուղղած նամակների և առաջարկությունների ծանրակշիռ մասը վերաբերում էր Սասունի ապստամբության պարտության հետևանքով այդ հայաշատ վայրը հայաթափ անելու օսմանյան կառավարության ջանքերին և նրանց դիմակայելու խնդիրներին: Ուշադրություն է գրավում Թիֆլիսում գումարված հայ մտավորականների՝ Վեհափառ Հայրապետին ուղղված նամակը, որի հեղինակները լավ իմանալով Խրիմյանի՝ արևմտահայության տառապանքները սեփական մաշկի վրա զգալու հանգամանքը, բռնադատված գաղթը բացատրելով «բարբարոս քուրդ հրոսակների ասպատակություններով և տաճիկ փաշաների անասելի կամայականություններով», հանգում են այն եզրակացության, որ բռնություններն ստիպեցին արևմտահայերին զենք վերցնել և «պաշտպանել իրենց մարդկային իրավունքներն ու ընտանիքի պատիվը»: Նամակագիրները հանձին Խրիմյանի տեսնում էին «Հայաստանի Եկեղեցվո գլուխ և ժողովրդի հովվապետին», առաջարկում՝ ձեռնարկել վճռական միջոցներ, «բախել Ռուսիո մեծազոր կայսեր և եվրոպական պետությանց դռները և արդարություն ու կարեկցություն հայցել Հայաստանի ընդունակ, աշխատասեր, բայց թշվառ ժողովրդի վրա»[3] :

Վճռական գործողությունների հակված Խրիմյանը 1894 թ. դեկտեմբերի 18-ին ձեռնարկում է իր տարիքի համար դժվարին ճանապարհորդություն դեպի Պետերբուրգ՝ ներկայանալու ռուսական ցար Նիկոլայ Բ-ին, արևմտահայության վերքերին սպեղանի որոնելու նպատակով: Նա հույս ուներ ճանապարհին ստանալ այն,

---

[1] Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԹԱ), Խրիմյանի ֆ., գ. 162:

[2] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 299, ֆ. 56, ց. 1-2, գ. 46, թ. 2, 3, 14, 14ա, 16, 35:

[3] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 46, թ. 1:

սակայն հույսերն ի դերև ելան: Կաթողիկոսը նոր էր հասել Նոր Նախիջևան, երբ տեղական իշխանությունները նրան հաղորդեցին իր ճանապարհորդության ընթացքը կասեցնող հրամանը[4]. ցարը հրաժարվեց ընդունել Հայոց Հայրապետին: 1895 թ. մարտի 2-ից մինչև մայիսի կեսերը արևելահայ նշանավոր հասարակական գործիչները հարաբերություններ են ստեղծում մոսկվաբնակ և պետերբուրգաբնակ հայազգի պետական պաշտոնյաների հետ՝ ցարից համաձայնություն ստանալու Հայոց Կաթողիկոսին ընդունելու համար: Միայն մայիսի 14-ին ցարը տվեց իր համաձայնությունը, որն արդյունք էր ոչ թե հայ գործիչների ջանքերի, այլ Ռուսաստանի արտաքին քաղաքականության որոշակի փոփոխությունների: Մայիսի 14-ին մեծ տերությունների Կ. Պոլսի դեսպանները Բ. Դոանը ներկայացրին Հայկական բարենորոգումների ծրագիրը: Նույն օրն էլ ցարը տվեց իր համաձայնությունը՝ ընդունելու Խրիմյանին: Ռուսական ցարը Հայոց Հայրապետին ընդունեց մայիսի 31-ին Պետերհոֆի մեծ դահլիճում: Թարգմանիչ կարգված պետական խորհրդական Կարապետ Եզյանը կարդաց Խրիմյանի դիմում-խնդրագիրը, որն ինքը փոխել էր ըստ իր ցանկության, կաթողիկոսի գրածը համարելով դժվար թարգմանելի[5]:

Ճանապարհորդությունը Պետերբուրգ չարդարացրեց հայության հույսերն ու ակնկալիքները: Նիկոլայ Բ-ն մի քանի հավուր պատշաճի ասված խոսքերից բացի, ոչինչ չխոստացավ: Ինչ-որ չափով նշանակություն ունեցան կաթողիկոսի անձնական հանդիպումներն ու բանակցությունները արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Առավել կարևորը Վեհափառի հանդիպումներն էին ռուսական կայսրության տարբեր տարածքների հայ գաղթօջախների հոծ հայության հետ: Արքունիքից ստանալով համահայկական հանգանակության թույլտվություն, Խրիմյանը պատկառելի գումարներ հանգանակեց արևմտահայության համար: Կաթողիկոսի ճանապարհորդությունը տևեց յոթ ամիս: Այդ ընթացքում, Սասունի ապստամբության պարտությունից և դրան հաջորդող կոտորածներից հետո, Քննիչ հանձնաժողովի կազմած տեղեկագրի հիման վրա, Մեծ տերությունների դեսպանները կազմեցին «Մայիսյան բարենորոգումների ծրագիրը» և ներկայացրին սուլթանի հաստատմանը: Դիվային մտահղացմամբ Աբդուլ-Համիդը այդ ծրագիրն ստորագրելու փոխարեն սկսում է իրականացնել Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ վայրերում հայկական կոտորածներ, որոնք շարունակվեցին մինչև 1896-ի ավարտը: Գաղթը Արևմտյան Հայաստանից, որ սկսվել էր իբրև սովի հետևանք, հասավ ահռելի չափերի: Այս անգամ փախչում էին թուրքական յաթաղանից, պետական հայահալած ու հայաջինջ քաղաքականությունից: Անհրաժեշտ էր ձեռնարկել շտապ միջոցառումներ՝ արևմտահայերին դրամական, նյութական, հոգևոր-բարոյական օգնություն հասցնելու համար, ջանքեր թափել գաղթականներին ժամանակավոր օթևաններ հատկացնելու և ապա վերստին մայր երկիր դարձնելու նպատակով: Լայնածավալ Ռուսական կայսրության տարածքում բաց-

[4] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., XII բ., գ. 3386:

[5] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., XII բ., գ. 3383:

ված համահայկական հանգանակությամբ ստացված գումարների չափը կաթողիկոսի հրամանով չի հրապարակվում ո՛չ «Արարատ»-ում, ո՛չ էլ որևէ այլ պարբերականում: Խրիմյանը մտավախություն ուներ ցարական աստիճանավորների ոտնձգություններից: Ինչպես արդեն ասվեց, Ռուսաստանում կաթողիկոսին հաջողվել էր հանգանակել մի պատկառելի գումար: Մայր Աթոռից նա սերտ հարաբերություն է հաստատում նորընտիր Պատրիարք Մատթեոս Իզմիրլյանի հետ, հաղորդում, որ հանգանակած գումարներն ուղարկում է, որպեսզի մեծ մասը հատկացվի Սասունի կոտորածներից վերապրածներին, թույլ չտալու Սասունի հայաթափումը: Նա Իզմիրլյանին ուղարկում է պատկառելի գումարներ՝ մանրամասն նշելով, թե որ վայրին ինչքան պետք է հատկացնել: Խրիմյանը հատուկ հոգածություն է ցուցաբերում Մշո Ս. Կարապետ վանքում բացված որբանոցի նկատմամբ, պատվիրում ուղարկած գումարի մի մասը հատկացնել այդ վանքին, հանձնել վանահայր Վարդան վարդապետին (հեղափոխական ծածկանունը՝ Հեսու), «վասնզի այդ վարդապետը լավ ճանաչում եմ, անձնվեր և հավատարիմ պաշտոնյա է»[6]: Խրիմյանի ջանքերի շնորհիվ Մոսկվայի մեծահարուստ Ժամհարյան եղբայրները Կ. Պոլսի ռուսական դեսպանության միջոցով Պատրիարքարանին են փոխանցում 10.000 ֆրանկ՝ հայ որբերի կարիքները հոգալու համար: Կաթողիկոսը տեղեկացնում է Պատրիարքին, որ երեք տարի շարունակ կուղարկվեն նույն քանակի գումարներ, և զգուշացնում է, որ դրանք օգտագործվեն միայն որբերի կարիքների բավարարման համար, այլապես բարեգործները կհրաժարվեն դրամն ուղարկելուց[7]: Արևմտահայերին, մասնավորապես սասունցիներին, օգնություն հասցնելու տարբեր ուղիներ է որոնում և գտնում կաթողիկոսը: Պատրիարքի միջոցով դրամական օգնություն ուղարկելը լեգալ ուղին էր: Բայց դա քիչ էր: Կ. Պոլսի ռուսական դեսպանությունը ևս հաճախ ձայնակցում էր Թուրքիայի արտաքին գործոց նախարարության աստիճանավորներին՝ Հայաստանից օգնություն ուղարկվող գումարները ներկայացնելով իբրև հեղափոխական կոմիտեներին հղված միջոցներ և խոչընդոտում դրանք ըստ պատկանելվույն հասցնելու գործին: Այդ պատճառով կաթողիկոսը որոնում է այլ ուղիներ: Նա կապ է հաստատում Արևմտյան Հայաստանում իր մասնաճյուղերը տարածած ՀՀԴ տարբեր կոմիտեների հետ: Կարսի կոմիտեի ներկայացուցիչ Արամ Արամյանի և նրա գործընկերների միջոցով Խրիմյանը գումար է ուղարկում դարձյալ Վարդան վարդապետ Հակոբյանին[8]: Կաթողիկոսի հորդորով հերոս սասունցիներին օգնության ձեռք է մեկնում Հնդկաստանի հայ գաղութը և ուղարկում 5000 ռ., որը դարձյալ Ժամհարյանների միջոցով հասցվում է Սասուն-Մուշ՝ անձամբ Վարդան Հակոբյանի ձեռքը[9]: Մի այլ անգամ

---

[6] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 268, թ. 71:

[7] Նույն տեղում:

[8] ՀՀ ԿՊՊԱ 56 և 57 ֆոնդերը լի են Խրիմյանի և այդ վարդապետի տարբեր ժամանակներ գրված նամակներով:

[9] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 17, գ. 72, թ. 12:

Խրիմյանը 50 ոսկի, այս անգամ Իզմիրլյանի միջոցով, ուղարկում է ՀՀԴ անդամ նույն հեղափոխական վարդապետին: Հանձնարարությունը կատարելուց հետո, արդյունքի մասին պատրիարքը հաղորդում է կաթողիկոսին[10]: Իրար են հաջորդում բազմաթիվ օգնություններ արևմտահայ տարբեր վայրերի՝ մեծ ու փոքր գյուղերի գյուղական քահանաներին, թեմական առաջնորդներին, ժողովրդի օգնության գործը կազմակերպելու համար (մեր հանրապետության Կենտրոնական Պատմական արխիվը լի է նման վավերագրերով):

Սուլթանի սանձազերծած կոտորածների ալիքը գավառներից հասնում է Օսմանյան կայսրության մայրաքաղաք: Մեծ տերությունների դեսպանների աչքի առաջ 1895-ին գնդակոծվեց Բաբը Ալիի խաղաղ ցույցը, որին հաջորդեց մայրաքաղաքի հայության կոտորածը: Այդ լուրերը լսած ալեզարդ կաթողիկոսն իր բողոքն ու ցասումն է արտահայտում: Իր անսահման վիշտը հայտնելով Իզմիրլյան Պատրիարքին՝ 1895 թ. հոկտեմբերի 5-ին նա նկատում է, որ պոլսահայերը երկար ժամանակ չէին հավատում գավառներում գործված ոճիրներին, իսկ այժմ նրանք սեփական մաշկի վրա զգացին այդ ամենը: «Գիտեմ, թե փրկություն և ազատություն արյունով կգնվի, սոսկ փաստաբանություն և բողոք բավական չէ»[11],- գրում էր Խրիմյանը: Գովեստով արտահայտվելով ցույցի կազմակերպիչների և մասնակիցների մասին, նա իր զարմանքն է հայտնում, թե «ինչպես բռնության վարժեցած հայ ժողովուրդը խիզախեց արյան դեմ, բանտերուն դեմ, մահվան դեմ»: Նա հավատում էր, որ նման գործողություններով կարելի է հասնել հայկական հարցի լուծմանը: Ըստ Խրիմյանի, ինչպես ցորենի հատիկը, որ ընկնում է հողի մեջ, մեռնում, բայց նորից ծլում են նոր հատիկներ, այնպես էլ «հայոց կոտորած հատիկները ինքնանոր բուխ արյունով ներկված պիտի բուսացնեն հայոց հայրենյաց ազատություն»[12]: Նա հույս ուներ, թե պատրիարքը իրեն «ավետիս պետք է անե, որ այդ վերջին դեպքը գործին արագություն տալով, վախճան բերե հայկական խնդրույն»: Ոգեկոչելով Ավարայրի հերոսներին և «Սուրբ Ղևոնդի աննկուն ոգին», կաթողիկոսը քաջալերում է պատրիարքին, հույս ու հավատ ներշնչում, իսկ ինքը ընկնում տագնապների մեջ: Չանցած մի շաբաթ, հոկտեմբերի 10-ին, կաթողիկոսը դարձյալ գրում է պատրիարքին: Նոր լուրերի ակնկալիքով նա պատասխան է խնդրում պատրիարքից, դատապարտում «անզուսպ և կատաղի մահմեդական մոլեռանդությունը», «օտար, ծախու գրչակներին, որոնք «աննպաստ դատաստան արին հայոց այդ հանդուգն և անօրինական ցույցին համար», արդարացնում «հուսահատ և համբերությունը սպառած ժողովրդի» ազատության ձգտումը, որ ոմանք անվանեցին ծայրահեղություն[13]: Կոտորածների զոհերին Խրիմյանը համարում է «հայրենյաց ազատության մարտիկներ», խնդրում պատրիարքից մանրամասն շարադրել ցույցի

---

10 Նույն տեղում, գ. 55, թ. 94:

11 ԳԱԹ, Խրիմյանի ֆ., գ. 64:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում, գ. 65:

ձկարագրությունը և հղել Մայր Աթոռ՝ թանգարանում պահելու, ապագա սերունդներին հաղորդակից դարձնելու միտումով:

ԲարեՈրոգումների մայիսյան ծրագիրը, այլ փաստաթղթերի նման, մնաց թղթի վրա: Ահագնանում է արևմտահայ գաղթականների հոսքը Արևելյան Հայաստան: Կաթողիկոսը տեղի հոգևոր առաջնորդներին հրահանգներ և օգնություն է ուղարկում՝ գաղթականներին ապաստանելու համար: Բաթումի երեսփոխան Սարգիս Շաթիրյանը[14], վիրահայոց հոգևոր առաջնորդ Գևորգ Սուրենյանցը[15] կաթողիկոսի ցուցումով տեղերում հանգանակած գումարներով հոգում են գաղթականների կարիքները: Ցարական տարբեր աստիճանավորներ՝ Բաքվի նահանգապետը, Կովկասի կառավարչապետությունից Շերեմետևը, ոչ միայն խոչընդոտում են հանգանակությունները, այլև արգելում կոտորածների զոհերի հիշատակին հոգեհանգիստ կատարել՝ պատրվակելով, թե հոգևորականների քարոզները «թշնամանք են սերմանում տարբեր ազգությունների միջև»: Արևմտյան Հայաստանում շարունակվող կոտորածներին հաջորդում են տարբեր վայրերի ինքնապաշտպանական մարտերը: Ցարական տարբեր պաշտոնյաներ՝ Կովկասից՝ Շերեմետևը, արտաքին գործոց նախարարությունից՝ Գորեմիկինը, գաղտնի գրություններ են հղում կաթողիկոսին, մեկը՝ 1895 թ. հոկտեմբերի 30-ին, մյուսը՝ հոկտեմբերի 31-ին: Շերեմետևի գրությունը կաթողիկոսի հեռագրի պատասխանն էր, որ վերջինս ուղղել էր Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովին՝ տեղեկություններ խնդրելով տեղի հայկական կոտորածների, Իզմիրլյան Պատրիարքի կացության և Թուրքիայի Հայ Եկեղեցուն սպառնացող վտանգի մասին, հորդորելով դեսպանին ջանքեր գործադրել օսմանյան մայրաքաղաքի հայությանն օգնելու համար: Շերեմետևը Նելիդովի անունից հանգստացնում էր կաթողիկոսին՝ հայտնելով, որ վտանգ չի սպառնում ո՛չ Կ. Պոլսի հայությանը, ո՛չ էլ Հայ Եկեղեցուն ու պատրիարքին: Նելիդովը, սակայն, բողոքում էր արևմտահայ գավառներում տիրող իրավիճակից. «Գավառներում տեղի են ունենում իրադարձություններ, որոնց սկսողները, ցավոք սրտի, մեծ մասամբ հայերն են՝ հրահրված հեղափոխական կոմիտեների կողմից, դրանից հետո կարելի է պատկերացնել թուրքերի վրեժխնդրությունը և քրիստոնյաների կորուստները»[16]: Փաստորեն, ցարական պաշտոնյան կոտորածների մեղքը բարդում է գավառահայերի վրա՝ զոհին հատկացնելով մեղավորի դեր: Ռուսական դեսպանը հաղորդում է կաթողիկոսին, որ տերությունների կողմից առաջարկված բարեՈրոգումների ծրագիրը հաստատվել է սուլթանի կողմից և դրա իրագործման համար անհրաժեշտ է, որ հեղափոխական առաջնորդները հրաժարվեն անմիտ ցույցերից, պետությունների միջամտության պատրանքներից և վերջ դնեն հուզումներին: Նելիդովը խնդրելով պահանջում է Խրիմյանից՝ օգտագործել իր ողջ հեղինակությունը՝ արևմտահայերի վրա ներգործելու համար:

---

[14] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 1-2, գ. 46, թ. 58:

[15] Նույն տեղում, թ. 50-51:

[16] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 299, թ. 6 (թարգմանություն ռուսերենից):

Համանման բովանդակություն ուներ կաթողիկոսին ուղղած Գորեմիկինի գրությունը, ուր դարձյալ հաղորդվում էր հայաբնակ նահանգներում բարենորոգումներ անցկացնելու ծրագրին սուլթանի տված համաձայնության և արևմտահայ գավառներից հասնող վրդովեցուցիչ լուրերի մասին. «Ի Տիգրանակերտ, ի Զեյթուն, ի Կարին, հայք գրեթէ ամենուրէք եղեալ են դիւթողք անկարգութեանց... Հայք Կովկասու համակրութեամբ մեծաւ վերաբերէին ապստամբ գործողութեան համազգայնոց իւրեանց ի Փոքր Ասիա, հայթայթելով զնոսա նիւթական օժանդակութիւն»[17]: Արտաքին գործոց նախարար Լոբանով-Ռոստովսկին իր ենթակայի միջոցով հորդորում էր Խրիմյանին՝ կոնդակներով դիմել նախ արևմտահայերին, որպեսզի հեռու մնան «հեղափոխական ձեռնարկներից», ապա՝ արևելահայերին, «անպատշաճ պաշտպանությամբ» չսատարեն արևմտահայ ազգակիցներին: Ցարական նախարարը ցանկանում էր իր ձեռքին գործիք դարձնել Հայոց Կաթողիկոսին, նրա միջոցով ազդել հայության երկու հատվածների վրա, կարծեցյալ «հեղափոխական շարժումներից», իրականում՝ ինքնապաշտպանական մարտերից հրաժարվելու, ազգի գոյատևումը ապահովող ելույթներից զերծ մնալու համար: Նույն ժամանակ Բ. Դուռն իր կողմից պահանջում էր Իզմիրլյան Պատրիարքից կոնդակով դիմել ժողովրդին և հորդորել՝ հեռու մնալ հեղափոխական շարժումներից: Պատրիարքը և կաթողիկոսը կտրականապես մերժում են այդ առաջարկները: «Այդպիսի հրաւէր մը շատ անիրաւ պիտի ըլլար և նոյնիսկ բնութիւն պիտի ունենար յանիրաւի թափուած այնքան անմեղ արիւններուն պատասխանատուութիւնը զոհերու վրա թողնելու և ջարդերն կարգադրող և գործադրողները ի չքմեղս հանելու աշխարհի առջև... Զարմանք, որ այս կոնդակի պահանջ մը տարբեր ձևերով կը կրկնուի այսօր և սակայն բան մը չըլլար վերջ տալու կոտորածոց, որք կը շարունակուին»[18]:

Խրիմյանը ձեռնարկում է բազմաթիվ քայլեր, դիմում ցարական տարրաստիճան պաշտոնյաների, որպեսզի թույլ տրվի ամեն տարի կատարել համահայկական հանգանակություն և հայթայթված գումարներով հնարավոր լինի հոգալ յաթաղանից մազապուրծ գաղթականների հոգսերը: Ուշադրություն է գրավում կաթողիկոսի դիմումը Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության գործերի կառավարչին, ուր նա կատարում է հետաքրքիր դիտարկումներ. «Ժամանակաւոր թեթևացումը չի վճռի ո՛չ գաղթական փախստականների բարեկեցութեան խնդիրը, ո՛չ էլ մնացածների գոյատևման հարցը, քանի որ նրանց ունեցուածքը կոտորածների ժամանակ յափշտակում է մուսուլմանների կողմից»[19]: Վեհափառը նկատում է, որ իրավիճակի վատթարացումը հնարավորություն չի տալիս փախստականների վերադարձը հայրենի եզերք: Իսկ դրանից կտուժի Ռուսաստանի Արևելյան քաղաքականությունը, քանի որ նա կկորցնի իր ամենահավատարիմ հենարանը Փոքր Ասիայում: «Արևմտյան Հայաստանում բնակվող միակ քրիստոնյա ժողովրդի

---

[17] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 14, գ. 52, թ. 2:

[18] Նույն տեղում, ց. 17, գ. 55, թ. 135:

[19] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 14, գ. 52, թ. 7:

վերջնական բնաջնջումը կամ թվաքանակի նվազումը կարող է ունենալ վտանգավոր հետևանքներ: Ձերդ գերազանցությունը կարող է ճշգրիտ որոշել այն հնարավոր հետևանքները, եթե Ռուսաստանի սահմանակից նահանգները վերածվեն մուսուլմանական և եվրոպական գաղութարարների խառը բնակչության»[20]: Խրիմյանն առաջարկում էր բարեկարգումներն իրականացնել առաջին հերթին այդ նահանգներում, բարելավել քրիստոնյա բնակչության հողօգտագործման եղանակը, հաստատել առնվազն երկու կամ երեքամյա ժամկետ, որի ընթացքում գաղթականները պետք է պահպանեն սեփականատիրական իրավունքները հողի և ունեցվածքի նկատմամբ, մինչև հնարավոր դառնա նրանց վերադարձը հայրենի օջախներ: Քաջիմացությունն արևմտահայ կյանքին իրավունք էր տալիս կաթողիկոսին պնդել, որ բարեկարգումներն իրականացվեն ռուսական բանակի բարձրաստիճան սպայական կազմի վերահսկողության ներքո, այլապես այդ ծրագիրը կմնա մեռած տառ: «Ռուս սպաների մեջ կան բազմաթիվ անձնավորություններ, որոնք քաջ գիտակ են տեղական պայմաններին և փորձառություն ունեն ասիական ժողովուրդների կառավարման մեջ»[21]: Կաթողիկոսը կատարում է ամենօրյա մեծ աշխատանք Էջմիածնում կուտակված արևմտահայ գաղթականության վիճակը դույզն ինչ բարելավելու համար: Մայր Աթոռի սեղանատանը օրը երկու անգամ կերակրվում էին հարյուրավոր գաղթականներ: Պարսկաստանից Հայաստան ձգվող ճանապարհին գտնվող վանքերի վանահայրերը հատուկ հրահանգ են ստանում կաթողիկոսից՝ պատսպարել գաղթականներին, հոգալ նրանց օթևանի և սննդի հոգսերը: Պարսկաստանի սահմանագլխին գտնվող աղքատ վանքերի նկատմամբ Խրիմյանը ցուցաբերում է հատուկ վերաբերմունք: Այդ վանքերի թվին էր պատկանում Ս. Թադեի վանքը: Չնայած այն բանին, որ կաթողիկոսը զգալի գումարներ էր հասցրել վանահորը՝ Հովհաննես վարդապետ Բազունուն, այդտեղ հասած գաղթականներին օթևան տալու համար, վերջինս ոչ միայն թերանում է իր պարտականությունների մեջ, այլև պարսից սարբազների օգնությամբ գաղթականներին դուրս է հանում վանքից: Զայրացած Վեհափառը պաշտոնանկության սպառնալիքով ստիպում է վարդապետին գաղթականներին բերել վանք, պատսպարել նրանց մինչև գարուն, ապա ճանապարհել Ս. Էջմիածին: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ հիշյալ վարդապետը երկար ժամանակ գտնվում էր կաթողիկոսի ուշադրության կենտրոնում[22]:

Կոտորածներից մազապուրծ արևմտահայությանն օգնելու նպատակով եռանդուն գործունեություն է ծավալում կաթողիկոսության պաշտոնական օրգան «Արարատ»-ը: Կրոնական բովանդակություն ունեցող հոդվածներից բացի, ամսագիրն սկսում է բարձրացնել ողջ հայությանը հուզող, ազգի գոյատևմանը նվիրված բազմաթիվ հարցեր: Ամսագիրն արտատպում է ռուսական և եվրոպական առաջա-

---

[20] Նույն տեղում:

[21] Նույն տեղում, թ. 8-9:

[22] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 14, գ. 7, թ. 1-30:

դեմ մամուլում տպված հոդվածներ[23]: Առանձնակի վերաբերմունք է դրսևորում ամսագիրը ինքնապաշտպանական մարտերի նկատմամբ: Ժամանակագրական կարգով հոդվածներ են նվիրվում Սասունի ինքնապաշտպանական մարտերին, նրան մասնակից հայ հայրենասեր հոգևորականներին, նշում, որ կաթողիկոսական դիվանը լի է պաշտոնական զեկուցագրերով: Իրար են հաջորդում հոդվածները Վան քաղաքամեջի, նրա գավառների, Հայոց Ձորի, Շատախի, Եդեսիայի և նրա շրջակա գյուղերի, Արաբկիրի թեմի, նույնիսկ փոքրիկ գյուղերի ինքնապաշտպանական մարտերի մասին: Ուշագրավ մի փաստ. Վանա ինքնապաշտպանական մարտերից հետո ամսագիրը եզրակացնում է. «Եթե չլիներ ընդդիմությունը, երբեք տարակույս չկա, որ բոլոր Վանա ժողովուրդը հոռեգույն կերպով վիճակակից պիտի լիներ գավառներու ժողովրդյան»[24]: Իսկ խմբագրականները շեշտում էին. «Ամենայն ճնշում ընդդիմություն է առաջ բերում, ամենայն հալածանք՝ ապստամբություն է ծնեցնում»[25], հավաստելով այն գաղափարը, որ արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները, ինքնապաշտպանական մարտերը արդյունք են թուրքական բռնապետության սանձազերծած հայկական կոտորածների: Համեմատելով ամսագրում տպագրված հոդվածները Պատմության Արխիվի կաթողիկոսական դիվանում պահվող վավերագրերի հետ, գալիս ենք այն եզրակացության, որ տպված նյութերը Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի հոգևոր առաջնորդների զեկուցագրերն են՝ ուղղված կաթողիկոսին, որը վերջինս ապագա պատմաբանների նկատմամբ ունեցած մեծ պատասխանատվությամբ հրատարակել է տալիս «Արարատ»-ում:

Բազմաթիվ են Ամենայն Հայոց Հայրիկի 1895-96 թթ. գործունեությունը լուսաբանող մեծ ու փոքր փաստերը, արխիվային վավերագրերը: Հաջորդում են տարիները, փոխվում գործող անձինք, հերոսներն ու դավաճանները, սակայն նույնն է մնում 19-րդ դարի երկրորդ կեսի հայ իրականության ամենաժողովրդական դեմքերից մեկը՝ Մկրտիչ Ա Վանեցին, Խրիմյան Հայրիկը, որի գործունեությանն ամեն պահի անդրադառնում ենք մենք, երբ մեզ համար դժվար է ապրել և պայքարել: Տարիների հեռվից մեզ է հասնում մեծ մարտնչողի հուսադրող խոսքը՝ «Հուսահատելու չենք»[26], ստիպելով ապրել ու պայքարել վասն հայրենյաց:

---

23 «Արարատ», 1894, № 10, էջ 383-389, 1896, № 4, էջ 167-168, 368, № 6, էջ 282 և այլն:

24 «Արարատ», 1896, № 11, էջ 530:

25 «Արարատ», 1896, № 9, էջ 418:

26 Положение армян в Турции до вмешательства держав. Москва, 1896, с. 311.